Այս ամենը տեսնում ու  
լսում է գայլը: Նա մըտ-  
քումը դնում է, որ ուլե-  
րին խաբելով ներս մտնի  
նրանց տնակը: Մի օր երբ  
մայրը դուրսն է լինում,  
գայլը գալիս է կամաց-  
կամաց, թաթով զարկում  
է դուանը:

Զալիկ-մալիկ ուլիկներ,  
Զալպտուրիկ այծիկներ,

### Կ Ո Ր Ա Ծ Հ Ո Ր Թ Ը

Զիւն էր գալիս փաթիլ-փաթիլ.  
Հետն էլ անձրև կաթիլ-կաթիլ,  
Այդ միջոցին մի պառաւ կին  
Հորթ էր պտրում դաշտի միջին:

Ելէք դուռը բաց արէք,  
Բերաններդ թաց արէք,  
Ես ձեզ համար կուրծքս լի  
կաթ եմ բերել իւղալի:

Ուլերը մի լաւ ականջ  
են դնում և հասկանում  
են, որ դուռը բախողը ի-  
րանց մայրը չէ, և պա-  
տասխանում են.—Դու մեր  
մայրը չես. մեր մօր ձայնը  
քաղցր է ու բարակ, իսկ  
քո ձայնը հաստ է ու խըռ-  
պոտ, մեր մայրը դուռը  
պողերովն է բախում, իսկ  
դու չանգրտում ես ճան-  
կերովդ: Մի քիչ սպասիր,  
ահա մեր մայրը կրգայ,  
քաջ Բօղարն էլ հետը:

Բօղար շան անունը լը-  
սում է գայլը, իսկոյն հե-  
ռանում է սուս ու փուս:

Ուլերի մայրը գալիս է,  
գովում է ուլիկներին և  
ասում. «Դուք լաւ էք ա-  
րել որդիք, որ դուռը բաց  
չէք արել, եթէ ոչ նա ձեզ  
ամենքիդ էլ կուտէր»:

Կովը եկաւ տաւարիցը,  
Կուրծքը ու ծծեր կաթով լիքը.  
«Հորթուկս ո՞ւր» է, նա բառանչեց,  
Խեղճ պառաւին լացացրեց:

Մինչդեռ այսպէս պառաւ ու կով  
Ողբում էին լաց ու կոծով,  
Յանկարծ լաւեց մի բարակ ձայն.  
Կովն իմացաւ, որ հորթն է այն:

Կովը վազեց բառանչելով,  
Իսկ պառաւը տընքտընքալով,  
Կորած հորթը մօրը գտաւ.  
Լիք ծծերը բերանն առաւ:

Ծըծեց բոլոր կաթն ու տկզեց,  
Տանտիկնոջը բան չըթողեց,  
Բայց պառաւը, այս անգամին  
Սիրով ներեց չար հորթուկին:



### ԱՆՏԱՌԻ ՄԱՆՈՒԿԸ

#### 1

Անտառի խորքում մի  
ձօճ կար կապած և նրա  
մէջ մի մանուկ դրած:  
Լաց էր լինում մանուկը:  
Մայր չըկար մօտը, որ

ծիծ տար, հայր չըկար,  
որ պահպանէր: Անտառու-  
մը մարդ չըկար:

Մի գթոտ պախրակով  
կաթնալից կրծքով եկաւ  
ձօճի մօտ իր հորթուկի  
հետ և տխուր ձայնով ե-  
րեխին ասեց.

Սիրուն երեխայ,  
Որբ ես մնացել,  
Քո անբախտ մօրը  
գերի են տարել.  
Նա զնաց, կորաւ,  
էլ հետ չի գալու,  
էլ ոչ մի անգամ  
քեզ ծիծ չի տալու,  
Նա քեզ փաթաթեց  
լայն տերեներով,  
ձօճի մէջ կապեց,  
«նանիկ» ասելով.  
Նա լաց էր լինում  
աղի արցունքով,  
Իր վերջին նանիկն  
ասում էր լալով.  
«Մեծատերև  
թաթաշոր.  
«Մանրատերև  
ոտաշոր,  
«Քամին կանի՝  
ժաժ կըտայ,  
«Պախրէն կըդայ՝  
ծիծ կըտայ»...  
Ահա եկել եմ,  
որ քեզ ծիծ տամ ես,  
Պահեմ պահպանեմ  
իմ հորթուկիս պէս:

2

Պախրան ծիծ տրւաւ  
երեխին, երեխան կշտա-  
ցաւ ու քնեց, Պախրան  
իր հորթին թողեց երեխի  
մօտ, իսկ ինքը զնաց մօ-

տերքում արածելու, որ  
կամքը շատացնի, և գայ  
երկուսին էլ ծիծ տայ:  
Հորթը մնաց երեխի մօտ,  
օրօրեց նրան և նանիկ  
ասեց.—  
Նանիկ արա,  
նանիկ, նանիկ.  
Նանիկ արա,  
սիրուն մանկիկ.  
Ահա կըդայ իմ մայրիկը,  
Կուրծք ու ծրծեր  
կաթով լիքը...  
Ամեն գետնի  
նա չի նստում,  
Ամեն խոտից  
չի արածում,  
Նա չի խմում  
ամեն ջրից,  
Աղ չի լիզում  
ամեն քարից.  
Նա սարէսար  
ման է գալիս,  
Որբ է գտնում,  
ծիծ է տալիս.  
Որտեղ որ է,  
ահա կըդայ.  
Ինձ էլ, քեզ էլ,  
կուշտ ծիծ կըտայ.  
Նանիկ արա,  
նանիկ, նանիկ,  
Նանիկ արա,  
սիրուն բալիկ...  
Պախրան կուրծքը լիքը  
յետ դարձաւ արօտատե-  
ղից և ծիծ տրւաւ երե-  
խին էլ, հորթին էլ:

Ով որ տարով կըմեծա-  
նայ, մեր երեխան օրով  
մեծացաւ: Շատ չանցաւ,  
նա դուրս եկաւ ճօճիցը,  
մէկ օր չորեթաթ տւաւ  
միւս օրը ոտքի կանզնեց.  
մի քանի անգամ սահեց,  
վայր ընկաւ, բայց շուտով  
ամրացաւ և սկսեց պախրի  
հետևից վաղւրզել:

3

Մի թագաւոր որդի չու-  
նէր. երազումն ասեցին.  
«Թագաւոր, Աստւած քեզ  
մի որդի պիտի տայ ան-  
տառի խորքում»:

Մէկ անգամ այս անգա-  
ւակ թագաւորը որսի գը-  
նաց իր որսորդների հետ:  
Շատ ման եկան, ոչինչ  
չըգտան, բայց որ հասան  
անտառի խորքը, այնտեղ  
մի պախրի հետք գտան և  
նրա մօտ երեխի ոտնա-  
տեղեր:

Ամենքը մնացին զար-  
մացած և չէին հաւատում  
որ երեխի կըլինի ոտնա-  
տեղերը. բայց թագաւորն  
խկոյն յիշեց իր երազը և  
հրամայեց որսորդներին,  
որ երեխի հետքը քշեն և  
ուր որ լինի՝ գտնեն նը-  
րան:

Որսորդները գնացին և  
երկու ժամ չանցած, մի  
սիրուն տղայ ըերին թա-  
գաւորի մօտ և պատմե-  
ցին, թէ ինչպէս գտան  
նրան պախրի ծիծը ծը-  
ծելիս:

Թագաւորը շատ ուրա-  
խացաւ, երեխին զրկեց  
համբուրեց և անունը դը-  
րաւ Պախրատուր: Պախ-  
րատուրը մեծացաւ թա-  
գաւորի պալատումը, լաւ  
ուսում առաւ, վերջը դա-  
ռաւ թագաւոր և մեծ զօր-  
քով գնաց իր մօրն ազա-  
տեց գերութիւնից:

### ՈՐԲԻ ՊԱՀՈՂՆ ԱՍՏԻԱԾ է

Փայլուն արևը արդէն մայր մտաւ,  
Լուսինն էլ շուտով գնաց թաք կացաւ,  
Գիշերւայ մութը աշխարհս պատեց  
Եւ աշնանային ցուրտ քամին փչեց:  
Ամեն մարդ քաշւեց իր տունը մտաւ,  
Ամեն երեխայ մօր գիրկն ընկաւ,

Միայն խեղճ որբը, որ չունէր հայր, մայր,  
Ոչ մի ազգական, ոչ քոյր ոչ եղբայր,  
Ոտքերը բորիկ, տկլոր ու քաղցած,  
Մի տան պատի տակ մնաց կուչ եկած:  
Բարի տան-տէրը, վերևից նայեց,  
Թշւառ որբիկին ներս հրաւիրեց,  
Եւ այնուհետև տարաբախտ տղան  
Ունէր իր համար տէր ու տիրական:



### ԳԻՒԼՆԱԶ ՏԱՏԻ ԹՈՌՆԵՐԸ

Մէկ անգամ Գիւլնազ  
տատին շրջապատեցին իր  
թռոները և ստիպեցին, որ  
տատը թռչնիկներ շինէ  
նրանց:

Տատն էլ վեր առաւ  
փոքրիկներից մէկին դը-  
րաւ ծնկան վրայ, երկու  
ձեռքերից բռնեց, և վեր  
ու վայր թափ տալով եր-  
գեց.

Ղնւ—ղնւ—ղնւ  
ա—ղնւ—ղնւ.

Նակ, նակ, ա—ղու—  
նակ. թը ոռո...

Յետոյ մի ուրիշն ըն-  
կաւ տատիկի գիրկը և  
ասեց.

Տատիկ ջան, տատիկ,  
ինձ էլ մի կաչաղակ շի-  
նես...

Տատիկը նրան էլ դրաւ  
ծնկներին և առաջւան պէս  
երգեց.

Չա-չա չա, կա - չա, չա  
Ղակ, ղակ կա—չա—  
ղակ. թը ոռո...

—Տատիկ ջան, տատիկ,  
ինձ էլ մի ծիտիկ շինես,  
ասեց ամենից փոքրիկը:

Տատիկը նրան էլ վեր ու  
վայր թոցնելով երգեց.

Ծիւ եմ, ծիւ եմ,  
ծըլւըլում եմ,

Ծիւ, ծիւ, ծիւ:

Ոստոստում եմ,

թոչկոտում եմ,

Տիւ, տիւ, տիւ:

Արի, թեկիկ,

արի, փետրիկ,

Որ ես դառնամ.

փոքրիկ ծիտիկ,

Փոքրիկ ծիտիկ,

պիծիկ—միծիկ,

թը ոռո...

—

ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂ

Պ Ա Ռ Ա Ի Ը

Ջնւ—ջնւ, ջնւ—ջու,  
իմ վառիկներ,

Սիրուն ճուտեր,

հաւ մարիկներ,

Ոսկեփետուր աքլարիկներ,

Եկէր կերէր

ձեր հատիկներ.

ՄԱՆՈՒԿՆԵՐ

Զար փիսիկը մօտ է գալիս,

Սկ ձագին է մտիկ տալիս.

Թաթը մեկնեց,

վզից բռնեց.

Աքաղաղներ,

հաւ մարիկներ,

Պահպանեցէք

ձեր ճուտիկներ:

Ա. Ք. Ա. Հ. Ե. Ե. Ր.

Հասէք, հասէք օգնեցէք,

Զար փիսիկին պատժեցէք:

Հ Ա Ի Ե Ր

Ժողովւենք միանանք,

Զար փիսիկին վրայ տանք:

Բ Ո Լ Ո Ր Ը

ՏԵՍԱՐ, տեսարք

ինչ եղաւ,

Գող կատուն որ


մեզ տեսաւ,

Խիստ վախեցաւ

ու վախաւ.

Ուրեմն ապրենք միասին,

Որ մօտ չըգայ թշնամին:



Ինչու աքլարը կանգ-  
նած է բակում, պինդ—  
պինդ կանչում է իր կու-  
կուրիկուն. — Էնդուր որ  
վաղուց արևն է ծագել:  
Բայց ծոյլ երեխան քնից  
չի զարթել: Դեռ չի վեր

կացել, աղօթքն արել, դըպ-  
րոցի դասը դեռ չի սովո-  
րել. Կանչում է աքլարն  
իր կուկուրիկուն, տղայոց  
պարտքը միտներն է ձը-  
գում:

### ՀԱՐՍԻ ՀԱՇԻՒԾ

Երկուշաբթի հաց կը-  
թըխեմ, երեքշաբթի լոշ  
կըթըրջեմ, չորեքշաբթի  
լւացք կանեմ, ուրբաթ  
օրը պաս կըկենամ, շաբաթ  
օրը ժամ կըգնամ, լոյս  
կիրակի փոանց—փոանց  
(հազիւհաղ) կըզարդար-  
ւիմ, կերթամ հօրանց:

### ԶՈՐՍ ԵՂԱՆԱԿ

Մարտը տալիս է  
Ճնծաղիկ  
Ապրիլը կապոյտ  
մանուշակ,  
Մայիսին բացւում է  
վարդը  
Սոխակը երգում անուշակ:  
Յունիսը մեզ խոտ է  
տալիս,  
Խսկ յուլիսը առատ ցորեն,  
Օգոստոսը տանձուխնձոր,  
Եւ ուրիշ շատ հասուն  
մրգեր.  
Սեպտեմբերը մեզ տալիս է  
Խաղողի բոլոր տեսակը,  
Հոկտեմբերը կարմիր գինի:  
Նոյեմբերը  
բոխկն ու տակը:

Դեկտեմբերին  
ձիւն է գալիս,  
Յունւարին ծածկում  
սար ու ձոր,  
Փետրւարին սկսում է  
Փոփոխակի ցուրտ ու  
տաք օր:

Ահա այսպէս բոլոր տարին  
Թաւալւում է  
չորս շրջանում,  
Այս պատճառով  
չորս ժամանակ՝  
Չորս եղանակ է  
մեզ բերում:

### ՏԱՐԻԱՅ ԱՄԻՍՆԵՐԸ

Յունւար, փետրւար,  
մարտ, ապրիլ, մայիս, յուն-  
իս, յուլիս, օգոստոս,  
սեպտեմբեր, հոկտեմբեր,  
նոյեմբեր, դեկտեմբեր:

### ԳԴԱԼ-ՓՈԽ

Ամառն էր: Հունձն ըն-  
կել էր: Մէկ լուեցի ու  
մէկ աշտարակցի միասին  
հունձ էին անում: Ճաշի  
ժամանակ նրանց համար  
մածուն բերին մի մեծ  
մաթրաթով. բայց երկու  
գդալի տեղ մէկն էին բե-  
րել:

Երբ որ մածնի բըթու-  
ճը պատրաստեցին, աշ-  
տարակցին ասեց.

— Գդալը մէկ հատ է.  
արի գդալ-փոխ անենք,  
գդալ-փոխ ուտենք:

Լուեցին չըհամաձայ-  
նեց, ասեց.

— Թող ես գդալով ու-  
տեմ, դու ձեռով կեր:

— Ոչ, պատասխանեց  
աշտարակցին: Որովհետև  
գդալ-փոխ չես ուզում,  
արի մէկ բան ասեմ, այն-  
պէս անենք: Ովոր մեզա-  
նից եօթը գիւղի անուն  
տայ վրայ-վրայ, շուտ  
շուտ գդալով նա ուտի:

— Լաւ. առաջ ես կա-  
սեմ, ասեց լուեցին ու  
սկսեց.

— Հլէ, լօ...ոի, հլէ,  
Ու...զուն...լար...

Լուեցին միայն երկու  
գիւղի անուն տւաւ, այն  
էլ չըկարողացաւ շուտ-  
շուտ ասել ու սուս կա-  
ցաւ. յետոյ աշտարակցին  
սկսեց և կարկուտի պէս  
վրայ տրւաւ:

Ուշի—Ուշական  
Փարպի—Բիւրական  
Թալին—Թալիշ—  
Մաստարա

Գդալի պոչը դէմն արա:  
Ասեց ու գդալն առաւ  
լուեցու ձեռքից: Լուե-  
ցու բերանը մնաց բաց.  
բայց էլ ի՞նչ կարող էր ա-  
նել. խաղը տանուլ էր  
տըւել:

### ԱՐՀԵՍՏ ՀՆՏՐՈՂ ՄԱՆՈՒԿԸ

Թորոսի որդին մի ծոյլ  
տղայ էր, ոչ գիր էր սով-  
րում և ոչ մի արհեստ:

— Ի՞նչ արհեստ սով-  
րեմ. — Փընթիքնթում էր  
նա. կեկչութիւնը շատ  
լաւ արհեստ է, բայց բո-  
բիկ ոտքով ամանում  
կանգնել, վրան պարտել,  
դա այնքան հեշտ չէ: Ա-  
ւելի հեշտ է փուքսի փշե-  
լը, բայց այդ իմ ձեռքում  
երկար չեն թողնիլ: Վար-  
պետ էլ դառնամ, ի՞նչ եմ  
անելու. պէտք է մատնե-  
րով փոքր ինչ բամբակով  
տաք-տաք պղընձին նաշա-  
դիրքսեմ, ձեռքերս այրեմ:  
Զէ, այդ իմ բան չէ:

— Դարբնի մօտ կեր-  
թամ, այնտեղ էլ փուքս  
կայ, ձմեռն էլ տաք է,  
բայց մեծ ոյժ է պէտք  
այդ գործի համար. ահա-  
գին մուրճով երկաթը  
ծեծել, որ նա տափակի, —  
ես այդ չեմ անիլ, ինչ  
կուզի լինի:

— Նալբանդը լաւ է: Մե-  
խի ծայր սրել և պայտեր  
շտկել, այդ շատ դժւար  
չէ, բայց մէկ ամենի ձիու  
ոտք բռնել, ծնկանը դնել  
— երկիւղալի է, ձիու աքա-  
ցին իմ ընկերներիս ապ-  
տակից թունդ է: Զէ, իմ

կարծիքով դա լաւ արհեստ չէ:

— Դերձակութիւնը մաքուր արհեստ է, լաւ միտսընկաւ: Բայց ինչ եմ ասում. ամբողջ օրերով ծալպատիկ նստել, գլուխքաշ գցած կարել ու կարել, ոչ խաղալ կըլինի և ոչ վազվրդել: Զէ դա էլ բան չէ:

— Ինչու չըգնամ, որմադիր դառնամ, բարձր պատերի ծայրերին կանգնեմ, այնտեղից կանչեմ.

— «Քար ու կիր տըւէք, աղիւս ձգեցէք»: Այսպէս կըգոռամ և կըհրամայեմ, որ աշխարհք տեսնի, թէ ես վարպետ եմ, գործս լաւ գիտեմ: Բայց վայթէ յանկարծ այդ բարձր տեղից ոտքս սլկընի և թըլմփալով ներքն գորւիմ: Զէ, այդ հեշտ գործ չէ և ոչ իմ բանն է:

Երեխ չըկայ այնպիսի արհեստ, որ ես հաւանեմ, գնամ սովորեմ: Թէ հիւսն դառնամ, ոտքս կըկարեմ. կօշկակար դառնամ, ձեռքըս կըծակեմ. ոսկերիչ դառնամ, մատներս կայրեմ. թէ բրուտ դառնամ, ցեխ պիտի կոխ տամ. վարժարան գնամ, գիր

պիտի սովորեմ: Զէ իմ կարծիքով ամենից լաւ է՝ ոչինչ չըշինեմ, ոչինչ չըսովորեմ: Բայց այնուհետեւ ես ինչ կըդառնամ:

### ԾՈՅԼ ԱՂՋԻԿ

Բանն ինչ կանեմ,  
կեղտոտ է,  
Բամբակը կորիզոտ է.  
Մետաքս պիտի որ մանեմ,  
Մաստակ պիտի որ ծամեմ,  
Կտերը տիտիկ\*) անեմ,  
Անցնողին մտիկ անեմ,  
Ուտեմ, խմեմ,  
Մթնի, քնեմ:

### ԱՏԱՄԸ ՓՈԽԱԾ

Ատամ, ատամ,  
իմ կաթնատամ,  
Գնամ բարով  
Հարիւր տարով:  
Իսկ դու արի  
Գալըդ բարի  
Իմ նոր ատամ.  
Ես քեզ կըտամ  
Հարիւր տարի  
Հազար բարի—  
Ել դաւուրմա,  
Ել բաստուրմա,  
Զամչով վլաւ,  
Հնդու խուրմա,

Միշտ, ամեն օր,  
Տանձ ու խնձոր,  
Փստա, բաղամ,  
Էլ որ մէկի  
Անունը տամ,  
Ոսկի ատամ...

### ՊԱՐՍԻԿՆ ՈՒ ԱՅԾԸԸ

Կար չըկար երբեմն  
Մի աղքատ պառւիկ,  
Ունէր մեր պառաւը  
Կաթնատու այծիկ.  
Զալիկ, մալիկ,  
Կաթնատու այծիկ:  
Պառաւը ձմեռը  
Այծիկը պահեց,  
Իր բերնի պատառը  
Նըրա հետ կիսեց.  
Միրով յօժար  
Նըրա հետ կիսեց:  
Երբ որ ձիւնը հալւեց,  
Բըսաւ կանաչ խոտ.  
Պառաւն իր այծիկը  
Դուրս տարաւ արօտ.

Ուրախ, զըւարթ  
Դուրս տարաւ արօտ:  
Թանձը մառախուղը  
Գետինը պատեց,  
Պառաւի առջեկից  
Այծը կորցրեց:  
Ափսոս, ափսոս,  
Այծը կորցրեց:  
Պառաւը լաց էլաւ,  
Իսկ գայլը ոռնաց,  
Մոլորւած այծիկը  
Բարձր մըկըկաց.

Մըկըկ, մըկըկ,  
Այծը մըկըկաց,  
Գայլն իսկոյն մօտեցաւ,  
Այծին շալակեց.  
Պառաւը հետեկից  
Բարձրածայն գոչեց.

«Հայ-հայ, վայ-վայ»,  
Բարձրածայն գոչեց.

Խեղճը մնաց կանգնած  
Մի փունջ խոտ ձեռին,  
Անմխիթար ձայնով  
Կանչելով այծին.

«Ե՛կ-եկ, եկ-եկ»,  
Կանչելով այծին:



### ԾԱՌԵՐԻ ԳԱՆԳԱԾԸ

Մեր տըւած վայտից  
Կրակ են անում, տուն  
տաքացնում, թոնիրը վառում, կերակուր եփում,  
վափուկ հաց թխում, ու-  
տում, կշտանում, բայց  
մեզ չեն յիշում, մեզ չեն  
պահպանում, այլ անգութ  
կերպով մեզ կոտրում  
են, մեզ փչացնում, ոչըն-  
չացնում:

\*) Կտերը տիտիկ անել=տանիքին, կտրին նստել.

Մեր գերաններից շինում են տներ, գոմեր, մարաքներ, ժամեր ու վանքեր. մեր տախտակներից յատակ, առաստաղ, աթոռ, պահարան, սեղան, նստարան, դուռ ու պատուհան, և այլ շատ տեսակ կան ու կարասիք: Բայց մեզ չեն յիշում, մեզ չեն պահպանում, այլ անգութ կերպով մեզ կոտորում են, մեզ փչացնում, ոչնչացնում:

Մեր գերաններից ու տախտակներից կամուրջ են շինում՝ գետերից անցնում, սայլեր են շինում, ամեն ինչ կրում. գութան են շինում՝ հողերը հերկում. լուծ, սամի շինում՝ եզ, գոմէշ լծում. օրօրոց շինում՝ մանկիկ օրօրում, նաւեր են շինում՝ ծովի մէջ լողում. Բայց մեզ չեն յիշում, մեզ չեն պահպանում, այլ անգութ կերպով մեզ կոտորում են, մեզ փչացնում, ոչնչացնում:

Ո՞վ չի տանձ կերել կամ կարմիր խնձոր. նուռ ու սերկեիլ, կեռաս ու սալոր. գեղձ կարմրաթուշիկ. ծիրան անուշիկ: Հապա խաղողը... և քանի տեսակ. կանաչ ու կարմիր, թուխ-թուխուսուռ ու սպի-

տակ, և այդ ամենը մարդիկն են ուտում: Բայց մեզ չեն յիշում, մեզ չեն պահպանում:

Խելօք մանուկներ, դուք որ մեծանաք, մեզ խնայեցէք, մեզ պահպանեցէք և ձեր հանդերում և պարտէզներում ծառեր տընկեցէք:

### Ծիծեռնակ

Խեղճ ծիծեռնակը ամբողջ ցերեկը չի հանգըստանում, այլ միշտ թըռչելով, դէս-դէն ընկնելով: Նիւթ է հաւաքում:

Նիւթ է հաւաքում, խոտ ու կաւ կրում, իր բունը շինում, բմբուլով լցնում, լաւ փափկացնում ու մէջը մտնում:

Մտնում է մէջը, երեք ձու ածում և երեք շաբաթ վրան թուխսնստում, ձագուկներ հանում:

Փափլիկ ձագերը դուրս եկան թէ չէ, մայրը թըռչում է, դէս ու դէն ընկնում, մժեղներ բերում, նրանց կերակրում:

Մի քիչ ժամանակ որ անց է կենում, սիրուն ձագերը թեսաւորում են, բնից դուրս թոչում և իրանց մօր հետ ճանապարհ

ընկնում լայն-լայն դաշտերի, խոր-խոր ձորերի, մութ անտառների, բարձր սարերի, կապոյտ ծովերի վրայից անցնում, հեռու տեղ գնում:

Զմեռն անցնում է, զարունը մտնում, մեր ծիծեռնակը էլի գալիս է, իր բունը գտնում, ճչում, ծըլւըլում, քանդածը շըտկում, կարկատում, շի-



ՄԵՂՈՒՆ ՈՒ ՄԱՐԴԸ

Մեղուն մէկ անգամ հարցրեց իր տիրոջը:

— Քո կենդանիներից որն է ամենից օգտակարը:

— Գիտեմ, դուերեկի կարծում ես, թէ ամենից օգտակարը դու ես, բայց սխալում ես, պատասխանեց տէրը:

— Ի՞նչալէս, տէր, որն է այն կենդանին, որ ինձանից աւելի օգտակար է:

— Ոչսարը:

— Այդ հաշիւ չէ, տէր. ոչսարը իմ հասակակից չէ: Նա մի ահազին կենդանի է, իսկ ես մի միջատ եմ: Դու պէտք է ինձ իմ ընկերների հետ համեմատես:

Նում, նոր ձւեր ածում, նոր ձագեր հանում, պահում մեծացնում, աշնան ժամանակ առաջւայ նման ճանապարհ ընկնում, — լայն-լայն դաշտերի, խոր-խոր ձորերի, մութ անտառների, բարձր սարերի, կապոյտ ծովերի վրայից անցնում, հեռու տեղ գընում:

— Շատ բարի. շերամը քեզ պէս փոքր է, բայց քեզանից շատ օգուտ է տալիս:

— Շերամը որն է:

— Շերամն այն իմաստուն որդն է, որ մեզ համար աննման քնքոյշ մետաքս է շինում:

— Հա, իմացայ. այդ այն շատակեր ծիճուն չէ, որին անդադար կերակրում էք թըթան տերեներով:

— Նա ինքն է:

Բայց գիտես, տէր, նրա չափ որ մեզ էլ կերակրէք, մենք մեղրի տեղ ուսկի կը շինենք ձեզ համար: Դուք ոչ մի կենդանի չունիք, որ իր կերակրուրը մեզ նման ինքը լինի շի-

նելիս և ուրիշներին էլ բաժին լինի տալիս։ Այնպէս չէ, պարոնս։

— Այո, այդ կողմանէ գու ուղիղ ես. մենք դէպի ձեզ շատ ապերախտ ենք,

որովհետև բոլորովին անխնամ ենք թողնում ձեզ...

— Մեղուն ուրախացաւ տիրոջ պատասխանիցը և թուաւ նստեց վարդենու վրայ։

## Մ Ե Ղ Ո Ւ

Ահա ծագեց արեգակը,  
Ահա ծաղկեց մանուշակը,  
Մեղուն թողեց իր փեթակը  
Տըգտըզալով, տըգտըզալով։

Մեղուն թուաւ ծաղկէ ծաղիկ.  
Մեղը առաւ քաղցը անուշիկ.  
Անուշ մեղը մանը տըզոց,  
Իսկ չարերին կըճ ու խայթոց։

## ԿԵՆԴՐԱՆԻՆԵՐԻ ՎԵՃԸ

Եզր կովը և շունը վիճում էին միմեանց հետ և ամեն մինը պնդում էր, թէ մեր տէրը ամենից շատ ինձ է սիրում։

Ի հարկէ, նա ինձ ամենիցդ շատ է սիրում, ասում է Եզր, և դիտէք ինչու համար։ Նրա համար, որ ես եմ նրա արօն ու տափանը քաշում, թէ մեր ամենից շատ ինձ է սիրում։

ինձ է լծում սայլում և իր ցորենը տանում ջաղաց, այնտեղ ալիւր շինում. յետոյ էլի ես եմ տանում քաղաք, ուր նա ծախում է այդ ալիւրը և իր տան համար առուտուր անում, երեխանց համար հագնելիք առնում։ Ուրեմն, դուք ինչ էք կարծում, ես որ չըլինէի, նա ի՞նչպէս կարող էր ապրել։

— Այդ ճշմարիտ ես ասում, ասեց կովը։ Բայց մեր տէրն ինձ ամենըիցդ աւելի

որ սիրում է, այդ նոա համար է, որ նա իմանում է, թէ քեզ նման աշխատասէր ու ժրաշան եզնուկին ես եմ պահել մեծացրել։

Այս մէկը Մէկ էլ որ՝ նըրա գերդաստանը իմ կաթնովս եմ պահում։ Այն մածունն ու կարագը, այն սերն ու կաթը, այն եղն ու պանիրը, այն տաք-տաք թանէ սպասը, որ ամեն օր խըպշտում են, ում տըւածն է։ Տեսնում էք ուրեմն, որ եթէ ես չըլինիմ բոլորը քաղցած կըկոտուին։

— Դու էլ ես ճշմարիտ ասում, սիրուն կովիկ, սկսեց Շունը։ Ո՞վ կարող է ուրանալ քո լաւութիւնը։ Շատ անգամ ես ինքս էլ եմ մասնակից լինում քո տըւած անուշ թանին։ Մեր տանտիկինը ամեն խնոցի հարելիս թանիցն ինձ բաժին է տալիս։ Ով որ քո լաւութիւնն ուրանայ, երկու աչքով կուրանայ։ Ես շատ երախտագէտ եմ, ոչ ոքի լաւութիւնը չեմ կարող ուրանալ։ Բայց գիտէք ինչ կայ։ Դուք մի նեղանաք, որ մեր տէրն ինձ ամենիցդ էլ շատ է սիրում. դրա համար մեծ պատճառ կայ, և ահա ասեմ, թէ ի՞նչն է դրա պատճառը...

Եւ շունն սկսեց մէկ-մէկ հաշւել, թէ ինքն ինչ ու ինչ է անում։

Ասած է՝ շունը որ հաշել սկսի, էլ չի դադարի։ Այնքան հաշեց եղան ու կովի հետ, որ տէրն իմացաւ, գնաց նրանց մօտ, շան լեզւիցն ազատեց, ասելով։ «Թող տուր դրանց Բնդար, դու չըգիտես, որ ամենքն էլ ինձ հարկաւոր էք, ոչ մէկդ միւսի արածը չէք կարող անել. այդ պատճառով ես ձեզ ամենքիդ էլ սիրում եմ, դուք էլ սիրեցէք միմեանց։

## ՄԵՂՈՒՆ ՈՒ ԱՂԱԼԻՆԻՆ

### 1. ՓՈՐ Ճ Ա Ն Ք

Ժրաշան Մեղուն ծաղկալից դաշտում իր մեղրի համար նիւթ էր հաւաքում։ Արևի տակին շատ աշխատելով, Մեղուն շատ յոգնեց և խիստ ծարաւեց։

Նրանից մօտիկ մի փոքրիկ վճ կար, մօտեցաւ լճին, վեր եկաւ ափին, որ քիչ ջուր խմի, ծարաւը կոտրի, նոր ուժ ստանայ, թոշի տուն գնայ։ Հէնց որ կուցաւ, որ ջուր կում անի, յանկարծ գլորեց, ընկաւ ջրի մէջ։ Նա շատ աշխատեց, որ ցամաք դուրս գայ, բայց մի փոքր ալիք նըրան ներս քաշեց, ափից հեռացըց։

Այսպէս խեղճ Մեղուն ցամաքից զրկւեց, ջրի երեսին թևերը փռեց և յոյսը կտրած մնաց մեկնըւած:

### 2. Օ գ ն ու թ ի ւ ն.

Որտեղից որտեղ՝ օգնութեան հասաւ մի շատ բարեսիրտ սիրուն Աղաւնի: Բարի Աղաւնին մօտեցաւ լճին և նայեց տեսաւ մեր խեղճուկ Մեղին՝ յուսահատ փուած ջրի երեսին: Խսկոյն շտապեց, մի տերև կտրեց և տարաւ Մեղի առաջը ձգեց:

Մեղուն բարձրացաւ տերմի վրայ, խելը ժողովեց, դէս ու դէն նայեց, որ տեսնի ով էր իր ազատողը, մահից փրկողը: Եւ տեսաւ իր մօտ բարի Աղաւնուն: Շատ նայեց վրան և ուզեց խօսել, Աղաւնուն գովել, չնորհակալ լինել: Բայց մեր բարեսիրտ սիրուն Աղաւնին շատ լաւ իմացաւ Մեղլւի միտքը, և ոչինչ չուզեց լսել նրանից, այլ թուաւ գնաց, որ ուրիշ տեղ էլ նոյն բարիքն անէ:

### 3. Երախտագիտութիւն.

Մի օր մեր Մեղուն նոյն դաշտի միջին մի սիրուն ծաղկից նիւթ էր ժողովում և ազտղալով Աղաւնուն գո-

վում: Մեղլւի հանդէպ, մի ծառի վրայ նստած ննջում էր ծանօթ Աղաւնին:

Հէնց այդ ժամանակ Մեղուն նկատեց, որ ահա մէկ մարդ, հրացանը ձեռին, մէջքը կոացրած, չար օձինման սողում է սուս փուս դէպի Աղաւնին: Մեղուն հասկացաւ, որ դա չար մարդ է, անգութ որսորդ է, ուզում է սպանել անմեղ թոչունին՝ իր բարերարին: Եւ ճշմարիտ որ այդ էր այն մարդու չար նպատակը:

Որսորդը չոքեց, տեղը պնդացրեց և հրացանը երեսին բռնեց: Հէնց մատը զըրաւ կայծառի ոտքին և ուզեց քաշել, գործը վերջացնել, այդ իսկ ըոպէին կայծակի նման Մեղուն վրայ հասաւ և չար որսորդի ձեռքըն այնպէս խայթեց, որ նա վեր ցատկեց: Նրա հրացանը նշանից շեղւեց և իր թնդիւնով անմեղ Աղաւնուն քնից զարթեցրեց ու տեղից թըռցրեց:

Այսպէս մեր Մեղուն իր բարերարին վերահաս մահից փրկեց, ազատեց:

Ինչ որ ցանես, այն կըհնձես, Արած լաւութիւնը չի կորչիլ:

### Փոքրիկ գառը

Մի փոքրիկ գառ, ձիւնի նման մաքուր սպիտակ, Մի օր գնաց մօր հետ դաշտը, որ արածի. Դաշտ որ հասաւ, սկսեց թոչել քարերի տակ, Էլ չէր ուզում փոքր միջոց հանգիստ նստի. Այս ու այն կողմ վազւը զելով չափ էր ընկնում, թէ քար, թէ ժայռ, թէ փոս, թէ ձոր չէր հարցնում, — Որդեակ, հանդարտ, ձայն էր տալիս նրա մայրը. Զգնյշ կացիր, որդեակ, լսիր իմ խրատը: Բայց գառնուկը մօր ասածին ուշ չի դարձնում, իր խաղալն ու վազւը զելով է շարունակում: Եւ վերջապէս՝ երբ մօր խօսքին ականջ չարաւ, Սարի գլխին իր գժութեան պատիժն առաւ. Մի մեծ քար կար այնտեղ ընկած, նրա ծայրում Մեր գառնուկը թոչկոտելով խաղ էր անում, Մէկ էլ յանկարծ նրա վրայից գլորւեց, Ոտի մէկը տակովս էլաւ, կոտրւեց:

### Մեղուն ու հաւը

Հաւը Մեղլւի վրայ ծիծաղելով ասեց մէկ անգամ.

— Ի՞նչ անշնորք ճանճ ես դու, ամբողջ օրը ծաղկից ծաղիկ ես թոչկոտում և ոչ մի բանի պէտք չես գալիս:

— Իսկ դու Հաւիկ—մարդիկ, ի՞նչ ես շինում, հարցրեց Մեղուն:

— Միթէ չըգիտես, թէ ի՞նչ եմ շինում. ես քեզ նման պարապ-սարապ չեմ տըզտըզում: Ես օրը մէկ ձու եմ ածում, մէկ ձու, զիտես մէկ ձուն քանիսն է:

— Գիտեմ, զիտեմ, հաս-

կացայ: Բայց ես մինչեւ հիմա կարծել եմ, թէ դու օրը հարիւր ձու ես ածում:

— Ի՞նչպէս կարելի է օրը հարիւր ձու ածեւ անխելք Մեղուն:

— Ապա, եթէ քո ածածդ ընդամենը մի ձու է, էլ ի՞նչու ես հարիւր անգամ կըրկչում, թէ հայ, հարայ լսեցէք, որ ես ձու եմ ածել: Իմ կարծիքով այսքան կըրկչալուն մի ձուն շատ քիչ է: Այնպէս չէ, իմաստուն հաւիկ մարդկ:

— Բայց դու ի՞նչ ես շինում, դու, որ իմ մի ձուն քիչ ես համարում:

— Ես ինչ որ շինում եմ,  
քեզ պէս կըրկըչալով չեմ  
յայտնում ուրիշներին: Ես  
գլուխս քաշ զցած, մեղք եմ  
շինում: Գիտե՞ս ինչ է մեղքը:  
Դա հաւի կերակուր չէ, քո  
խելքի բանը չէ, Հուփիկ  
մարիկ:

### Բառախաղ

Պօղոսն ու Պետրոսը բա-  
ռախաղի էին տալիս: Պօղոսը  
վարժւած էր, իսկ Պետրոսը  
նոր էր սովորում:

Ոհա թէ ինչպէս էին խա-  
ղում:

Պօղոս. Պետրոս, ասա՝ տունը:

Պետրոս. Տունը:

Պօղոս. Քեզ կծի շունը:

Պօղոս. Ասա՝ դուրը:

Պետրոս. Դուրը:

Պօղոս. Ընկնիս ջուրը:

Պօղոս. Ասա՝ պաս:

Պետրոս. Պաս:

Պօղոս. Ուտես թանէ սպաս:

Պետրոս. Էլ չեմ ասում. հի-  
մա ես կհարցնեմ քեզ:

Պօղոս. Լաւ, հարցուու:

Պետրոս. Ասա՝ ծիտ:

Պօղոս. Ծիտ:

Պետրոս. Ուտես մախոխ:  
Պօղոս. Այդ չեղաւ, Պետրոս:  
Ես ասում եմ ծիտ, դու  
ասում ես մախոխ. այդ  
ինչպէս կարելի է. տես-  
նում ես՝ նման չեն: Դեռ  
սպասիր, էլի ես կըհար-  
ցնեմ —

Ասա՝ ծիտ է:

Պետրոս. ծիտ է:

Պօղոս. Պետրոսն անմիտ է:

Պետրոս. Է՞ն, էլ չեմ ասիլ,  
ես անմիտ չեմ:

Պօղոս. Լաւ, շարունակենք,  
էլ այդպէս չեմ ասիլ:

Ասա՝ հաւ է:

Պետրոս. Հաւ է:

Պօղոս. Պետրոսը լաւ է:

Պօղոս. Ասա սանձ:

Պետրոս. Սանձ:

Պօղոս. Պետրոսն ուտի տանձ:

Պետրոս. Հիմա ես կըհարցը-  
նեմ: Ասա՝ սամի:

Պօղոս. Սամի:

Պետրոս. Շաքարը ծամի:

Պետրոս. Ասա՝ հաց:

Պօղոս. Հաց:

Պետրոս. Մի քիչ կաց:

Պօղոս. Է՞ն, բաւական է, դու  
լաւերը չես իմանում:

### ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

Դաշտը սիրուն է դալար բոյսերով  
Եւ անուշահոտ գոյն-գոյն ծաղկներով:  
Ուսումնարանը նոյնքան սիրուն է  
իր ուշիմ, խելօք, ժիր մանուկներով:

Սիրուն է ծառը կանաչ ճղներով.  
Փունջ-փունջ կախոտւած իր պտուղներով.  
Ուսումնարանը նոյնքան սիրուն է  
իր առաքինի խելօք սաներով:  
Սստւած, պահպանիր դու շատ օրերով  
Մեր անդաստանը իր մշակներով,  
Եւ մենք նըրանում զուքւինք, զարդարւինք  
Գեղեցիկ ուսման գոյն-գոյն փունջերով:

### Ուկի և երկաթ

Ուկին երկաթին անար-  
գելով ասեց մէկ անգամ.  
— Երանի գիտենամ, դու ին-  
չացնւ ես, որ մետաղների  
կարգն ես ընկել, քո սկ ու  
ժանգոտ երեսովը մարդու  
վրայ զզւանք ես բերում:  
Նայիր ինձ վրայ, տես՝ ինչ-  
պէս գեղեցիկ եմ փայլում:  
Ինչպէս շողողում: Նայիր  
մեր սիրուն օրիորդների ու  
հարսների ականջներին ու  
մատներին, դու կըտեսնես  
իմ փառքն ու պատիւը. Նա-  
յիր նըրանց ճակատների շար-  
քերին, դու կըտեսնես իմ  
փայլն ու գեղեցկութիւնը:

Զիմ հաշուում գինուերը, գըն-  
դասեղները, գիտեմ որ դու  
այնքան կոշտ ու կոպիտ ես,  
որ այդպէս քնքուշ բաների  
մասին ոչ ճաշակ ունիս, ոչ  
հասկացողութիւն:

Երկաթը պատասխանեց  
Ուկուն.

— Ես չեմ ուրանում, Ու-

կի աղա, որ դու գեղեցիկ ես  
ամեն բանի զարդն ու զար-  
դարանքը դու ես, գինը  
շատ բարձր է, աղքատի բան  
չես, բայց ինչո՞ւ ես չափիցդ  
դուրս գոռողանում: Քո սի-  
րուն օղակներդ ոչ ականջի-  
լսելիքն են աւելացնում, ոչ  
մատներին ու կոներին զօ-  
րութիւն ու ժըռութիւն են  
տալիս: Ճակատների փայլուն  
շարքերը գլխին խելք չեն  
տալիս. ոչ կուրծքերի նուրբ  
մանեակները սրտին գութ ու  
խնամք:

Ի՞նչ ասեմ մեր օրիորդ-  
ներին, որ քեզ այդ չափ պա-  
տիւ են տալիս, քեզ համար-  
հալուում, մաշւում ու բարա-  
կացաւ ընկնում: Իմ մի փոք-  
րիկ ասեղը քո բոլոր զար-  
դարանքներից աւելի է օգուտ,  
տալիս: Գիտե՞ս, Ուկի աղա,  
իմ փոքրիկ ասեղը քանի տուն,  
է պահում, և քանի որբի կերա-  
կրում: Իմ խոփն ու ձեփչը,  
ամբողջ աշխարհին հաց են,  
տալիս:

Մարգիկ ինչ որ շինում են  
կամ պէտք է կտրեն, կամ  
պէտք է ծեծեն, կամ պէտք է  
խարտոցեն, կամ պէտք է կար-  
կատեն: Իմ ուրագն ու կացինը  
որ չըլինին, իմ դուրն ու շա-  
ղափը, իմ սղոցն ու մուրճը, իմ

կտրիչն ու խարտոցը, էլ կարմղ  
էին մարգիկ քար քարի վրայ  
գնել, փայտ փայտի վրայ:

Անա այդպէս պարծենկոտ  
ես դու, Ոսկի աղա, քո փայ-  
լից կուրացած՝ ուրիշի լա-  
ւութիւնը չես տեսնում:

Թողնելով հօրս սրտում  
Ցաւալի յիշատակ:  
Դէհ, սիրուն ծիծեռնակ  
Հեռացիր, գնա արագ  
Դէպի հայոց աշխարհը,  
Ծնած տեղս Աշտարակ:

### Երգ պանդխտի

Ծիծեռնակ, ծիծեռնակ,  
Դու գարնան սիրուն թռչնակ,  
Դէպի նոր, ինձ ասա  
Թռչում ես այդպէս արագ:  
Ախ, թոփիր, ծիծեռնակ,  
Ծնած տեղս՝ Աշտարակ,  
Անդ շինիր քո բունը—  
Հայրենի կտուրի տակ,  
Անդ հեռու ալեոր  
Հայր ունիմ սգաւոր,  
Որ միակ իր որդուն  
Սպասում է օրէցօր:  
Երբ տեսնես դու նըրան,  
Ինձնից շատ բարև արա,  
Ասա՝ թող նստի լայ  
Իր անբախտ որդու վրայ:  
Դու պատմիր, թէ ինչպէս  
Աստ անտէր ու խեղճ եմ ես,  
Միշտ լալով, ողբալով,  
Կեանքս մաշւել եղել կէս:  
Ինձ համար ցերեկը  
Մութ է շրջում արեգը,  
Գիշերը թաց աչքիս  
Քունը մօտ չի զալիս:  
Շուտով սառ հողի տակ  
Կըպարկեմ այստեղ մենած,

### Երշակի շարադրութիւնը

Երկար ժամանակ սպա-  
սում էի, թէ երբ պէտք է ինձ  
ուսումնարան տանեն: Ու-  
սումնարանի մօտովն անցնե-  
լիս՝ որ լսում էի աշակերտ-  
ների երգելու ձայնը, սիրոս  
մի ուրիշ կերպ էր դառնում,  
մտքումս ասում էի, ախ, ե՞րբ  
կըլինի, որ ես էլ սրանց մէջը  
լինեմ, սրանց պէս կարդամ,  
սրանց պէս երգեմ, սրանց  
հետ խաղամ. արդեօք կար-  
ժանանամ այդ օրին:

Վերջապէս փափագիս հա-  
սայ. հայրիկս մի առաւօտ  
յայտնեց, թէ երկուշաբթի օրը  
քեզ տանելու եմ ուսումնա-  
րան և այսօր պէտք է գնամ քո  
ուսման պիտոյքներն առնեմ:  
Այն օրը էլ ես հաց չըկերայ  
չափագանց ուրախութիւնից:

Երեկոյեան հայրս եկաւ  
տուն: Ինչ ասես որ չէր ա-  
ռելինձ համար. — թուղթ, թա-  
նաք, թանաքաման, դասա-  
գիրք, տեսակ-տեսակ գրչա-

կոթեր, մատիտներ, տետ-  
րակներ: Բոլորը ջոկ-ջոկ թըղ-  
թերում փաթաթեցի ու գրի  
պահարանումս, մինչև հասաւ  
երկուշաբթին՝ ուսումնարան  
գնալուս օրը:

### Նոր տարի

Ահա հասաւ նոր տարի,  
Հետը բերաւ նոր բարի,  
Մանը տըղոց ուրախ օր,  
Բարի զաւակ հօրն ու մօր:

Մանը տղայք են ուրախ  
Ունին կաղին գողինաղ,  
Սալորի չոր, չամիչ, թուզ,  
Փշատ, ունար և ընկուզ:

Մանը տղայք, չըմոռանաք  
Աշխարհումս չէք մենակ.  
Ուրիշ շատ խեղճ տղայք կան  
Աղքատ ու անօգնական:

Նրանք հայր ու մայր չունեն,  
Սև չոր հացի կարօտ են.  
«Աղքատներին ողորմած  
Եղէք», կասէ ձեզ Աստած:

ԱՌԱԻՕՏԵԱՆ ԱՂՋԹՔ

Ով Տէր մեր գլուտ, Դու լոյս առաւօտ,  
Ծագիր և մեզ մօտ Քո լոյսդ անաղօտ,  
Թող լուսաւորւին մեր միտքն ու հոգին,  
Որ քո լոյս անւան լինինք փառաբան:

Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ամեն:  
Տէրուինսկան ԱՂՋԹՔ

Հայր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն Քո,  
Եկեսցէ արքայութիւն Քո, եղիցին կամք Քո, որպէս  
յերկինս և յերկրի. Զհաց մեր հանապազորդ տուր մեզ  
այսօր. թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք  
մերոց պարտապանաց. և մի տանիր զմեզ ի փորձու-  
թիւն, այլ փրկեա զմեզ ի չարէ. զի Քո է արքայութիւն  
և զօրութիւն և փառք յաւիտեանս. ամէն:

ՄԱՆԿԱԿԱՆ ԱՂՋԹՔ

Հայր մեր երկնաւոր, Հայր ամեն մարդի,  
Դու ինձ ամեն օր տաս հազար բարի—  
Կեանք, լոյս, կերակուր, հայր ու քաղցրիկ մայր,  
Մեծ ու փոքրիկ քոյր, անուշիկ եղբայր.  
Իսկ ես ինչ ունիմ որ ինչ տամ Քեզի.  
Առջեղ կընկնիմ, կենամ ազօթքի—  
«Շնորհ տուր ինձ, որ ծնողներիս,  
Վարժապետներիս և իմ մեծերիս  
Լինիմ սիրելի, իսկ Քեզ՝ հաճելի»:



Դ. ԱՂԱՅԵՍՆԻ ԳՐՔԵՐԸ

Ուսումն Մայրենի Լեզւի. ա. տարի «Պատկերա-	
ւոր այբբենարանով»	30 կ.
Ուսումն Մայրենի Լեզւի. բ. տարի	40 »
Ուսումն Մայրենի Լեզւի երրորդ գիրք	75 »
Ուսումն Մայրենի Լեզւի չորրորդ գիրք	90 »



Ա. մասի պահեստը գտնվում է «Նոր-Կեանք» գրախա-

նութում:

Հասցեն՝ Տիֆլիսъ, Михайловская ул. № 36,  
„Новая Жизнь“ Лазарю Карапетянцъ.

ԳԼԽԱԽՈՐ ՊԱՀԵՍՏԸ ԳՏՆԻՈՒՄ Է

ԹԻՖԼԻՍ—«Գիր» գրավաճառքում:

Հասցեն՝ Вельяминовская ул. № 7. Книжный мага-  
зинъ „Гиръ.“

2013

3227



